

Երաժշտական խաղ «Ջաղացս մանի, մանի»

Երգի կատարումը կարելի է սկսել ջրաղացի մասին ասացվածքների ասելով.

- ✓ Ես՝ աղա, դու՝ աղա, բա մեր աղունն ով աղա:
- ✓ Ջահելի խելք՝ անջուր ջրաղաց:
- ✓ Մուկն արատանը խեղճ չի մնա:
- ✓ Ջաղացից ես եմ գալիս, դու ե՞ս արոտել:
- ✓ Ամեն մարդ ջուրն իր ջաղացը կապի:
- ✓ Անջուր ջրաղացը այլուր չի աղա:
- ✓ Ջաղացը ջուրն է տարե, նա չախչախն է ման գալի:
- ✓ Ջաղացիդ միշտ հերթ լինի, մեջքդ ամուր բերդ լինի:
- ✓ և այլն:

Ապա շարունակել «Ջրաղաց» խաղով:

Երեխաներից մի քանիսը դառնում են ջրաղացի պտտվող անիվ, որին պտտում է ջուրը(նույն քանակով երեխաներ, որոնցից յուրաքանչյուրը բռնում է անիվ դարձած երեխաներից մեկի ձեռքից) և, թեթև, ռիթմիկ քայլերով պտտվելով, ռիթմիկ վանկարկում. «Գառ, գոռ, գուռ»: Երեխաներից մի քանիսը դառնում են ջրաղացի քար: Երբ անիվն սկսում է պտտվել, ջրաղացի քար դարձած երեխաները, ձեռքերն իրար ուսի վրա դրած, պտտվում են ու ռիթմիկ վանկարկում. «Չախկ, չոխկ, չուխկ»՝ միաժամանակ հարվածելով ոտքերով: Քիչ անց ջրերն ու անիվը դառնում են ցորեն և մոտենում ջրաղացքարին: Վերջինս տեղում կանգնելով և շարունակելով վանկարկումը, մի տեղ է բացում ցորենի համար: Ցորենը, վանկարկելով՝ «Թափ, թոփ, թուփ», մտնում է շրջանի մեջ: Ջրաղացքարը միանում և շարունակում է պտտվել: «Ցորեն» երեխաները ցուցադրում են ցորենի աղալը՝ անկանոն թռչկոտելով, զմփիկներով և այլն: Քիչ անց քարը նորից կանգնում է՝ չդադարեցնելով վանկարկումն ու քայլը: Այս անգամ, վանկարկելով՝ «Փառ, փոռ, փուռ», դուրս է «թափվում» այլուրը:

Խաղի ընթացքում կարող են օգտագործվել համապատասխան հնչողությամբ հարվածայիններ կամ շրխկաններ:

Որից հետո կատարել երգը: Երգի կատարումն կարելի է սկսել ռիթմիկ արտասանությամբ.

- Չըխկ, չըխկ, չըխկ, չըխկ:

Միանում են նույն ռիթմով ծափերը: Ապա միանում են մի քանի շրխկաններ: Երգի տողերը երգելիս՝ հարվածները դադարում են, իսկ կրկնվող տողը նորից ուղեկցվում է ռիթմին համապատասխան ծափերով (ցանկության դեպքում՝ նաև շրխկաններով):

Ջրադացի անիվի շարժումը ցուցադրելու համար երկուսով կանգնում են դեմ դիմաց, ձեռքերը հագուցում իրար և շրջանաձև պտտում մեկ՝ դեպի իրեն, մեկ՝ դեպի դիմացինը: Կարելի է նաև ձեռքերը հերթով պտտել՝ նախ աջը, հետո ձախը (մեկ՝ դեպի իրեն, մեկ՝ դեպի դիմացինը):

Երգը կարելի է կատարել.

- շրջանաձև պտտվելով՝ որպես ջրադացի քար,
- զույգերով,
- սկզբից՝ շրջանով, ապա շարունակել զույգերով:

Երգը ավարտվում է շրխկանների ռիթմիկ շրխկոցներով, որոնք հետզհետե մեղմանում են և մարում:

«Խնոցի, հարոցի» - 1

Խաղում են.

ա. Երկուսով, յուրաքանչյուրը աջ ձեռքով բռնում է իր դաստակից: Կանգնում են իրար դիմաց, յուրաքանչյուրը ձախ ձեռքով բռնում է դիմացինի աջ դաստակից: Նրանք դառնում են ճոճանակ: Մի փոքր երեխա նստում է նրանց ձեռքերին, իր ձեռքերով փաթաթվում նրանց վզին, իսկ նրանք տարուբերում են ու արտասանում կրկնակն ու առաջին տունը: Վերջին տողն ասելիս, իջեցնում են երեխային ու, ծափ տալով, ասում. «Տփեցի՛»: Տեքստը կարելի է շարունակել «բ» տարբերակով:

բ. Չույգերով, իրար դիմաց կանգնած, ձեռքերի մատներն իրար հագցրած, ոտքի մեկն առաջ, մյուսը՝ հետ: Ռիթմիկ շարժումով, նմանեցնելով խնցու ետուառաջ գնալ - գալու շարժմանը, մի ոտքից մյուսը տեղափոխվելով, ձեռքերը ռիթմիկ, կտրուկ շարժումով առաջ ու ետ տանելով, ասում են. կրկնակ.

Առաջինը – Խնցի,

Երկրորդը – Հարեցի:

Միասին – Հոփփը, լրփփը (կրկնում են 6 անգամ)

Ջրմփը, դրմփը (6անգամ)

Ծափը, ծրփը(6անգամ)

1. - Խնցի,

- Հարեցի.

Թանը հանի՝ քամեցի,

Սրսուռ չորթան շինեցի,

Եղով ապուր եփեցի,

Պետոն ուզեց՝ տփեցի:

2. -Խնցի, խնցի,

Գցեցի ու բռնեցի,

Տարա - բերի՝ զարկեցի,

Հրեցի, չխչփեցի,

Հարեցի, հա, հարեցի,

Դեղին կարագ հանեցի:

3. - Խնցի,

- Հարեցի.

Լըփը, ըփը, լըրընգա,

Դե տար, դե բեր, տըրընգա.

Թև տու, թև առ,

Ջըրընգա:

կրկնակ.

Առաջինը – Խնոցի,
Երկրորդը – Հարեցի:
Միասին – Հոփփը, լըփփը (կրկնում են 6 անգամ)
 Զըմփը, դըմփը (6անգամ)
 Ծափը, ծըփը(6անգամ)

Կրկնակը կարելի է կատարել՝ հերթով իրար փոխանցելով կրկնվող բառերը:
Խաղի ավարտից անմիջապես հետո, երգում են «Հարի, հարի, խնոցի» երգը:

«Հարի, հարի, խնոցի»

Երգը կատարում են զույգերով, իրար դիմաց կանգնած, ձեռքերի մատներն իրար հազգրածած, ոտքի մեկն առաջ, մյուսը՝ հետ: Ռիթմիկ շարժումով, նմանեցնելով խնոցու ետուառաջ գնալ - գալու շարժմանը, մի ոտքից մյուսը տեղափոխվելով, ձեռքերը ռիթմիկ, կտրուկ շարժումով առաջ ու ետ տանելով: Երգը կարելի է ավարտել՝ ասելով.
-Խնոցի, հարոցի, թանը՝ քեզ, կարագը՝ մեզ:

«Խնոցի, հարոցի» - 2

Երկուսով կանգնում են մեջք – մեջքի, թևերն հազցնում իրար մեջ: Նրանցից մեկը թեքվում է առաջ՝ մյուսին շալակելով ու ոտքերը գետնից կտրելով:
Նույնն էլ անում է մյուսը: Խաղում են ռիթմի մեջ՝ ասելով.

- Խնոցին հա հարեմ,
Շալակեմ՝ սար հանեմ:
- Խնոցին հա հարեմ,
Շալակեմ՝ գետն անցնեմ:
- Խնոցին հա հարեմ,
Շալակեմ՝ դաշտ տանեմ:
- Խնոցին հա հարեմ,
Կաթ ու մածուն կերցնեմ:

Կարելի է նույնն անել՝ ասելով.

-Խնոցի, հարոցի, թանը՝ քեզ, կարագը՝ մեզ:

«Խնոցի, հարոցի» - 3

Խաղում են զույգերով, իրար դիմաց կանգնած, ձեքերի մատներն իրար հագցրած, ոտքի մեկն առաջ, մյուսը՝ հետ: Ռիթմիկ շարժումով, նմանեցնելով խնոցու ետուառաջ գնալ - գալու շարժմանը, մի ոտքից մյուսը տեղափոխվելով, ձեռքերը ռիթմիկ, կտրուկ շարժումով առաջ ու ետ տանելով, ասում են.

-Խնոցի, հարոցի, թանը՝ քեզ, կարագը՝ մեզ: